8379

ЗКПЗ
З-22

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

174

ЗКПЗ
Հ-22

ՊԵՏՀՐԱՏ—ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ՄՈՍԿՎԱ • 1988

ՊՐՈԼԵՏԱՐՆԵՐ ԲՈԼՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՑԵՔ

ЗКП3
Հ-22
պր.
24 SEP 2006

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՊԵՏՀՐԱՏ—ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ-
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ ● 1938

8379

17.09.2013

1635
38

ИНСТРУКЦИЯ
О ПРОВЕДЕНИИ ВЫБОРОВ
РУКОВОДЯЩИХ ПАРТИЙНЫХ ОРГАНОВ

Госиздат — Отдел парт.-полит. литературы
Ереван, 1938

9 DEC 2000

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

Անհրաժեշտ գտնել 1938 թվի ապրիլ — հունիսի առաջին կեսի ժամանակամիջոցում անցկացնել կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները բոլոր սկզբնական, շրջանային, քաղաքային, ոկրուգային, մարզային, յերկրային և հանրապետական կուսակցական կազմակերպություններում:

Բոլոր կուսակցական կազմակերպությունների կարեվորագույն խնդ-

դիրը համարել՝ առաջիկա ընտրություններում ապահովել կուսակցական ղեկավար որգանների մեջ միանգամայն ստուգված բոլշևիկների ընտրությունը, վորոնք անսահմանորեն նվիրված են մեր կուսակցությանը, փորձված են ժողովրդի թշնամիների դեմ մղվող պայքարում և ընդունակ են մինչև վերջը պաշտպանելու կոմունիստական կուսակցության գործը:

Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները պետք է անցկացվեն կուսակցական-քաղաքական աշխատանքի հետագա ամեն կերպ բարձրացման, մասսաների հետ կուսկազմակերպությունների կապի ամրապնդման և կուսկազմակերպությունների առջև կանգնած քաղաքական ու տնտեսական խնդիրների հաջող կատարման նշանաբանով:

Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները անհրաժեշտ է անցկացնել ներկուսակցական դեմոկրատիան խստորեն պահպանելու և բոլշևիկյան քննադատությունն ու ինքնաքննադատությունը համարձակորեն ծավալելու հիման վրա:

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

29 ՄԱՐՏԻ 1938 Թ.

ՀՐԱՀԱՆԳ
ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՈՐԳԱՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Կուսակցական ղեկավար որգանների ընտրությունները անցկացնելիս անհրաժեշտ է խստորեն ղեկավարվել Համկ(բ)Կ Կենտկոմի Պլենումի 1937 թվի փետրվարի 27-ի հետևյալ վորոշմամբ.

«Կուսորգանների ընտրությունների ժամանակ արգելել ցուցակով քվեարկելը։ Քվեարկությունը կատարել ըստ առանձին թեկնածությունների, ընդամին կուսակցության բոլոր անդամների համար ապահովելով թեկնածուներին բացարկելու և վերջիններիս

քննադատելու անսահմանափակ իրավունք։ Կուսորդանների ընտրությունների ժամանակ սահմանել թեկնածուների փակ (գաղտնի) քվեարկություն»։

2. Փակ (գաղտնի) քվեարկությամբ ընտրվում են.

ա) սկզբնական կուսակցական կազմակերպություններից շրջանային, քաղաքային կուսակցական կոնֆերենցիաներն ուղարկվող պատգամավորները և շրջանային, քաղաքային, ոկրուգային կուսակցական կոնֆերենցիաներից մարզային, յերկրային կուսակցական կոնֆերենցիաներն ու ազգային կոմկուսակցությունների համագումարներն ուղարկվող պատգամավորները.

բ) սկզբնական կուսակցական կազմակերպությունների կուսակցական կոմիտեների անդամները և կուսակցական կազմակերպիչները (այնտեղ, որտեղ կուսկոմիտեներ չկան), շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների ու ազգային կոմկուսակցությունների կենտկոմների պլենումների անդամները և վերատուգիչ հանձնաժողովների անդամները։

3. Սկզբնական կուսկազմակերպությունների կուսկոմիտեների քարտուղարները, շրջկոմների, քաղկոմների, ոկրուգկոմների, մարզկոմների, յերկրկոմների, ազգային կոմկուսակցությունների կենտկոմների քարտուղարները և բյուրոյի անդամներն ընտրվում են համապատասխան կոմիտեների պլենումներում բաց քվեարկությամբ։

4. Կուսակցական կոնֆերենցիայի

(Ժողովի) նախագահությունը և մյուս ղեկավար որդաններն ընտրվում են բաց քվեարկությամբ, իրեն՝ կոնֆերենցիայի (Ժողովի) վորոշած թվով:

Կոնֆերենցիայի ղեկավար որդաններում և նոր ընտրվող կուսակցական կոմիտեի կազմում կարող են ընտրվել կուսակցական կոնֆերենցիաների նաև խորհրդակցական ձայնի իրավունք ունեցող պատգամավորները:

5. Կուսակցական ղեկավար որդանների ընտրությունները կատարվում են համապատասխան կուսակցական կոմիտեի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցման վերաբերյալ վորոշումը կոնֆերենցիայի (Ժողովի) կողմից լսվելուց, քննարկվելուց և ընդունվելուց հետո:

Կուսակցական որդանների հաշվետվությունները նախապես քննարկվում են կուսակցության համապատասխան կոմիտեների պլենումներում:

Կուսակցության կոմիտեների պլենումներում հաշվետու զեկուցումների նախնական քննարկումը այդ կոմիտեների պլենումների անդամներին չի զրկում կուսակցական ժողովներում և կոնֆերենցիաներում կուսակցական կազմակերպության ղեկավարության քննադատությամբ հանդես գալու իրավունքից:

6. Ընտրություններն անցկացնելուց առաջ կուսակցական կոնֆերենցիան (Ժողովը) սահմանում է ընտրվելիք կուսակցական որդանների

անդամների և թեկնածուների թիվը։

7. Կուսակցական ղեկավար որդանի նոր կազմի համար թեկնածություններն առաջադրվում են պատգամավորների կողմից և պերսոնալ կարգով քննարկվում են անմիջականորեն հենց կուսակցական կոնֆերենցիայում (կուսակցական որդանի անդամության և թեկնածության համար առանձին-առանձին)։

Նախապես ցուցակներ կազմել և դրանք կուսակցական կոնֆերենցիայի (ժողովի) նիստից անկախ քննարկել չի թույլատրվում։

Ժողովի ամեն մի մասնակցողին, կոնֆերենցիայի ամեն մի պատգամավորին, վորը ցանկանում է կուսակցական ղեկավար որդանի կազմում առաջադրել այս կամ այն թեկնածությունը, կոնֆերենցիայի (ժողովի) նախագահությունը ձայն է տալիս՝ թեկնածության մասին առաջարկություն մտցնելու և այդ առաջարկությունը հիմնավորելու համար։

Այն դեպքում, յերբ առաջարկություն է ստացվում թեկնածություններ առաջադրելը դադարեցնելու մասին, կոնֆերենցիայի (ժողովի) նախագահությունն այդ առաջարկությունը դնում է կոնֆերենցիայի (ժողովի) լուծմանը, և բաց քվեարկությամբ վճռվում է նոր թեկնածությունների ցուցակագրությունը շարունակելու կամ վադարեցնելու հարցը։

8. Կուսակցական ղեկավար որդանի կազմի համար առաջադրված բոլոր թեկնածությունների քննարկումը կատարվում է այն կարգով,

ինչպես նրանք ցուցակագրված են յեղել թեկնածությունները կուսակցական կոնֆերենցիայի (ժողովի) նախագահության մոտ ստացվելիս։

Թեկնածությունները պերսոնալ կարգով քննարկելու ժամանակ պետք է ապահովված լինի կուսակցական ղեկավար օրգանի կազմի համար առաջադրված թեկնածությունները բացարկելու անսահմանափակ իրավունքը, այսինքն՝ ամեն մի պատգամավոր կարող է բացարկել ցանկացած թվով առաջադրված թեկնածություններ, և առաջադրված ամեն թեկնածության շուրջը կարող են արտահայտվել անսահմանափակ թըվով պատգամավորներ՝ ինչպես «թեր», այնպես և «դեմ»։

Այն դեպքում, յերբ առաջարկություն է ստացվում այս կամ այն

թեկնածության քննարկումը դադարեցնելու մասին, կոնֆերենցիան (ժողովը) բաց քվեարկությամբ վճռում է տվյալ թեկնածության քննարկումը դադարեցնելու կամ շարունակելու հարցը։

Կուսակցական կոնֆերենցիային խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցող պատգամավորները և ՀամԿ(բ)Կ անդամության թեկնածուներն սկզբնական կուսկազմակերպությունների ժողովներում ու շրջանային կուսակցական ժողովներում կուսակցական ղեկավար օրգանների համար առաջադրված թեկնածությունների քննարկման ժամանակ օգտվում են խորհրդակցական ձայնի իրավունքով։

9. Այն թեկնածությունները քըննարկելուց հետո, վորոնց նկատմամբ

բացարկներ են ստացվել, անհրաժեշտ է ամեն մի առանձին դեպքում բաց քվեարկության կարգով վճռել այն հարցը, թե տվյալ թեկնածությունը պե՞տք է մտցնել, թե չմտցնել, այն ցուցակի մեջ, որը կուսակցական կոնֆերենցիայի (ժողովի) կողմից կազմվում է կուսակցական ղեկավար որդանների ընտրությունները փակ (գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու համար:

Ընդամին անհրաժեշտ է հաշվել ինչպես «բացարկելուն թեր», այնպես և «բացարկելուն դեմ» տրված բոլոր ձայները:

Այն թեկնածությունները, որոնց դեմ բացարկներ չեն ստացվել, բաց քվեարկության չեն դրվում և մտցրվում են ընտրությունները փակ

(գաղտնի) քվեարկությամբ անցկացնելու ցուցակի մեջ:

10. Քվեարկության արդյունքները հաշվելու համար կուսակցական կոնֆերենցիան (ժողովը) կուսակցական ղեկավար որդանների ընտրություններն անցկացնելուց առաջ բաց քվեարկությամբ ընտրում է ձայները հաշվող հանձնաժողով՝ կոնֆերենցիայի (ժողովի) կողմից սահմանված թվով: Ձայները հաշվող հանձնաժողովի անդամներն ընտրում են ձայները հաշվող հանձնաժողովի նախագահ:

Ձայները հաշվող հանձնաժողովի նախագահը քվեարկությունից առաջ պարտավոր է կուսակցական կոնֆերենցիայի (ժողովի) պատգամավորներին պարզաբանել փակ (գաղտնի) քվեարկությունն անցկացնելու կարգը:

Ձայները հաշվող հանձնաժողովը փակ քվեարկությունից առաջ պարտավոր է պատրաստել քվեատուփերը և անձամբ կնքել դրանք:

11. Փակ (գաղտնի) քվեարկությունը կուսակցական ղեկավար որգանների ընտրությունների ժամանակ պետք է անցկացվի կուսակցական կոնֆերենցիայի դռնփակ նիստում միայն վճռական ձայնի իրավունք ունեցող պատգամավորների ներկայությամբ:

12. Վճռական ձայնի իրավունք ունեցող ամեն մի պատգամավոր ստանում է կուսակցական ղեկավար որգանի մեջ ընտրվելու համար կոնֆերենցիայի (ժողովի) կողմից նշված թեկնածուների ցուցակի 1 որինակ: Կուսակցության անդամի պատգամավորական մանդատի վրա

կամ կոնֆերենցիային (ժողովին) ներկա գտնվող կուսանդամների ցուցակներում պետք է նշում կատարվի այն մասին, որ կուսակցության անդամը մասնակցել է քվեարկությանը:

13. Ամեն մի պատգամավոր փակ (գաղտնի) քվեարկության ժամանակ իրավունք ունի թեկնածուների ցուցակի մեջ ջնջել առանձին թեկնածուները կամ նոր թեկնածուներ ավելացնել կուսակցական ղեկավար որգանի կազմի մեջ ընտրվելու համար՝ անկախ այն բանից, թե կոնֆերենցիան (ժողովը) քանի հոգուց է սահմանել ընտրելու կուսակցական որգանը:

14. Ձայները հաշվող հանձնաժողովը քվեարկությունից հետո բաց է անում քվեատուփերը և, առանց կոն-

ֆերենցիայի (ժողովի) շենքից դուրս գալու, հաշվում է քվեարկության արդյունքները՝ կուսակցական որդանների անդամների վերաբերյալ առանձին և կուսակցական որդանների անդամության թեկնածուների վերաբերյալ առանձին: Ձայները հաշվող հանձնաժողովը պարտավոր է առանձին-առանձին հաշվել ամեն մի թեկնածությանը «թեր» ու «դեմ» տրված բոլոր ձայները:

Ձայները հաշվող հանձնաժողովը ձայները հաշվելուց հետո կազմում է արձանագրություն, որի մեջ մտցնում է քվեարկության արդյունքները՝ ամեն մի թեկնածության համար առանձին, և հանձնաժողովի բոլոր անդամներն ստորագրում են այդ արձանագրությունը:

Այն շենքում, որտեղ հաշվվում

են ձայները, ոչ ոք իրավունք չունի գտնվելու, բացի ձայները հաշվող հանձնաժողովի անդամներից:

15. Ձայները հաշվող հանձնաժողովը կուսակցական կոնֆերենցիայի (ժողովի) նիստում զեկուցում է քվեարկության արդյունքների մասին, ամեն մի թեկնածության վերաբերյալ՝ առանձին:

Կուսակցական ղեկավար որդանի կազմի մեջ ընտրված համարվում են այն թեկնածությունները, որոնք ստացել են ձայների մեծամասնություն, բայց ոչ պակաս կոնֆերենցիային վճռական ձայնի իրավունքով ներկա գտնվող պատգամավորների ձայների կեսից:

16. Փակ (գաղտնի) քվեարկության բոլոր նյութերը (թեկնածությունների ցուցակներ, դրավոր հայ-

տարարութիւններ, ձայների հաշիվը և այլն) պետք է պահվեն կուսակցական որդաններում՝ գաղտնի վաստաթղթերին հավասար իրավունքներով։

ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄ

29 ՄԱՐՏԻ 1938 Թ.

Թարգմանեց Ա. Տ. Մկրտչյան
Թարգմ. խմբագրեց Բ. Ն. Դավթյան
Տեխն. խմբ. Ս. Խաչատրյան
Սրբագրիչ Հ. Մանվելյան
Կոնտրոլ սրբագրիչ Լ. Արովյան

Գլավլիտի լիազոր №Կ—3270, հրատ. № 553,
Պատվեր № 54, տիրաժ 15.000
Հանձնված է արտադրության 1/IV 1938 թ.
Ստորագրված է տպագրության 3/IV 1938 թ.
Գինը 10 կ.
Պետհրատ—Կուսակցական-քաղաքական գրականության բաժնի տպարան,
Երևան, Ալավերդյան № 65

1635
38

164

ԳԻՆԸ 10 Կ.

ИНСТРУКЦИЯ
О ПРОВЕДЕНИИ ВЫБОРОВ
РУКОВОДЯЩИХ ПАРТИЙНЫХ ОРГАНОВ

Госиздат—Отдел парт.-полит. литерату
Ереван. 1938

ՀՀ Ազգային գրադարան
NL0188320